ընելքում միայն քրիստոնեաններն են անբերեռաբար «զախշիշ» խնդրում, մահմեդականները շատ ազնիւ և ծանրաբարոյ մարդիկ են։ Վերջապէս՝ մինչ ոտոստիքական տեղեկութիւնները երկրագնտիս վերայ եղած մահմեդականների թիւը մինչև 175 միլիոն են հաստատում միայն, Գերմ. կայսրը իւր բարեկամութիւնը խոստանում է 300 միլիոն մահմեդականներին, և ուրեմն փոխանակ նախօրօք նոցա ճիշդ թիւն ստուգելու, որ շատ հեշտ բան էր, առնուազն 100 միլիոնով բազմացնում է վեհանձնաբար իւր բարեկամներին։

—Գերմ. Պետական ժողովում վերջերս հարց էր դրած աւագ ուրբաթ օրը, որ բողոքականների համար մեծ ոչ է և կաթոլիկների համար ո՛չ՝ ամբողջ պետութեան համար պարտաւորեցուցիչ ոչ դարձնել։ Թէ ժողովում և թէ դուրսը մամուլի մէջ շատ վէճեր եղան այս մասին. կաթոլիկները պնդում են, թէ իբրեւ եկեղեցին այդ օրը ոչնական չի համարում, ուրեմն անտեղի է ստիպել նոցա մի աշխատանքի օր կորցնելու։ մի քանի բողոքական թերթեր պատասխանեցին դրան, որ ոչ մի օր կորցրած չլինելու համար՝ փոխարէնը կարելի էր զոհել բարեկենդանի 3 օրերից մէկը, որովհետ ոչնական են կաթոլիկների բնակած նահանգներում և շատ զեղծումների առիթ են լինում։ Ինչպէս երևում է, հարցը պէտք է վճռուի ի նպաստ բողոքականների, և աւագ ուրբաթը, իբրև Փրկչի չարչարանաց և խաչելութեան օր, վայելուչ լռութեամբ ոչնուի ամբողջ երկրի մէջ։

— Պետ. ժողովում հարց է եղել նաև երիտասարդ սերունդի մէջ տիրող բարոյական անկման մասին և այդ առթիւ պատգամաւոր Պասշէի խօսած ճառը զօրեղ տպաւորութիւն է գործել ժողովականների վերայ։ Սոցիալ-դեմոկրատների տարածած հակակրօնական դաղափարները նա դլխաւոր պատճառն է համարում այդ անկման և, նոցա երգերից և գրուածներից շատ օրինակներ բերելով՝ ցոյց է տալիս, որ այդպիսով ժողովրդից խլուում է նորա «ամենալաւ բարոյական նեցուկը»՝ կրօնը, և տեղը ոչինչ չի տրուում. հետևանքը պէտք է լինի բնականաբար հոգևոր դատարկութիւն և անկումն։

Հրապարակի վերայ եղած բարոյական զեղծումների դէմ արիաբար պատերազմելու գեղեցիկ օրինակներ են տալիս ամերիկացի կանայք։ Նոքա խստիւ բողոքեցին, երբ մի բազմակին մորմոն «Համաժողովի» անդամ ընտրուեցաւ. այժմ ևս եռանդուն ջանք են գործ դնում Պէնսիլվանիայի օրէնսդրական ժողովի մի անդամին հեռացնելու, որ վատ համբաւ է ստացել իւր անբարոյական շահատակութիւններով։

ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Տեղապահ Գեր. Սարգիս արքեպիսկոպոսի ընդունած հեռագրների համաձայն Գորին Վեհափառութիւն Սրբ Հայրապետը բարեհաճել է մարտ 25-ին առաւօտեան 11 ժամին մեկնել Տփխիսից և Սանահնի վանքը հանդիպելով ամսի 28-ին հասել է ողջամբ Էջմիածնադրապոլ։

Յունուար 24-ին Մայր Աթոռ է վերադարձել Շամախուոյ Կոնսիստորիայի նախկին Նախանդամ Բարեշնորհ Սահակ վարդ. Տէր Միքայէլեանը։

Մարտ 22-ին Ծանր հիւանդ վիճակի մէջ բերուեցաւ այստեղ Հին-Նախիջևանի փոխանորդ Արժ. Կիւրեղ վարդապետը։

Մեծի պահոց օրերում իւրաքանչիւր կիրակի երեկոյ քարոզ է խօսուում Մայր Տաճարի մէջ, իսկ շաբաթ երեկոյ կամ կիրակի առաւօտ գիւղի եկեղեցում. Մայր Տաճարի մէջ խօսել են Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս և Գրիգոր ու Մակար եպիսկոպոսներ (վերջինս երկու անգամ). իսկ գիւղի եկեղեցում Արժ. Եղիա, Կարապետ, Գարեգին և Սիօն վարդապետներ։

Բայի դորանից, Տեղապահ Սրբազանի կարգադրութեամբ շրջակայ մօտիկ տեղեր գնացել են քարոզելու՝ Արժ. Եղիա վարդապետ Իգդիրի կողմերը, Կարապետ վարդապետ Աշտարակ, Օշական, Սամադար, Երևան. Սիօն վարդապետ Նոր-Բայազիտի գաւառը և այլ տեղեր, Գարեգին վարդապետ Երևան, Փարաքար, Սամադար, Ալիրէզու։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ։

Ս. Ղևոնդեանց և ս. Վարդանանց տօնները կատարուեցան այս տարի ևս Ճեմարանում

պատշաճաւոր հանդիսով Սրբ. Միաբանութեան ներկայութեամբ։ Իսկ Ս. Սահակի տօնի օրը գրական երեկոյթ եղաւ, ուր ուսանողները պէտք է հանդէս բերէին այս անգամ Արժ. Գարեգին վարդապետի առաջնորդութեամբ Դպրեվանքի դասատանում կատարած ճանապարհորդութեան արդիւնքը։ Երկու ուսանողներ ճանապարհորդական նկարագիրներ կարդացին և Արժ. Գարեգին վարդապետը բացատրեց այսպիսի ճանապարհորդութիւնների նշանակութիւնը. այս առթիւ Մեծ. պ. Կոստանեան խրախուսիչ խօսքերով իւր գոհունակութիւնը յայտնեց այս օգտակար գործի համար աշխատութիւն յանձն առնողներին։ Ի ցոյց էին դրուած ճանապարհորդութեան միջոցին ձեռք բերուած հնագիտական առարկաները։

Բարեկենդանի շաբաթ օրը գրական երեկոյթ կազմուեցաւ ի յիշատակ մեծանուն Խաչատուր Աբովեանի։ Ուսանողներից մէկը պատմեց Աբովեանի կենսագրութիւնը, մի ուրիշը խօսեց նորա գրական գործունէութեան մասին. կարդացուեցան հատուածներ նորա գրուածներից և երգուեցան նորա շարադրած երգեր։ Պ Ց. Յովհաննիսեանը կարդաց նորա յիշատակին նուիրած մի ոտանաւոր, և հանդէսը փակեց պ. Տեսուչը՝ յորդորելով առանձնապէս, սիրել և սովորել այն լեզուն, որի մշակութեան համար մեծ գործ է կատարել արժանայիշատակ հանգուցեալը։ Հանդիսից յետոյ ուսանողները ներկայացրին Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպից քաղուած Աղան բալասի ողբերգութիւնը, որ անցաւ բաւական յաջող։ Թէ հանդիսին և թէ ներկայացման ճեմարանի ուսուցչաց հետ ներկայ էր նաև Մայր Աթոռի միաբանութիւնը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ա.

Մայր Աթոռի Հոգևոր, Ճեմարանի Վարչութիւնն այսու յայտնում է ի գիտութիւն հասարակաց. որ բարեյիշատակ բժիշկ Գէորգ Աւետիքեան Տիգրանեանց իւր կտակով, որ հաստատուած է Տագանրօգի նահանգական դատարանում 1894 ամի փետրուարի 17-ին՝ աւանդել է Ճեմարանիս Վարչութեանը կատարել հետևեալ պարտականութիւնները.

ա. Կտակի 3 յօդուածով աւանդել է քսանչորս հազար ռուբլի գումար, որպէս զի նորա տոկոսիքով Ճեմարանի մէջ իւր անունով պահուի երեք որդեգիր։ Ըստ այդմ նորա որդեգիրներն են ներկայումս Խալըխեան Յակոբ Մեծ Սալացի, Քիւրդեան Նիկողայոս Աքքիրմանցի և Փսերեան Եղիազար Զալթըցի։

բ. Կտակի 7 յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի իբրև պարգև այն հեղինակին, որը կը կազմէ եւ կը տայ հայերէն լեզուով Հայոց արմատական բառերի բառարան։

գ. Կտակի 8 յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի այն հեղինակին, որ կը կազմէ եւ կը տայ բառարան Հայոց հոմանիշ բառերի։

և դ. Կտակի 4 յօդուածով որոշուած է հինգ հազար ռուբլի, որի տոկոսիքով պէտք է տպուին հայերէն դասագրքեր և ձրիաբար բաժանուին չքաւոր հայ մանուկներին։ Դասագրքերի տպագրութեան ծախքի համար որոշուած է նաև այն տոկոսիքը, որ գոյացած է 7 և 8 յօդուածներում նշանակած գումարներից մինչև սոցա գործադրութիւնը։

Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնն այսու պատիւ ունի հրաւիրելու ձեռնհաս անձինքներին մինչև ց 1 հոկտեմբերի սոյն 1899 ամի ներկայացնել Վարչութեանս իրենց պատրաստի աշխատութիւնները՝ դասագրքերն և բառարանները, կտակի տրամադրութեան համեմատ քննելու և տնօրինելու համար։

Բ.

Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնն յայտնում է ի գիտութիւն հասարակաց, որ ներկայ $18^{98}/_{99}$ ուսումնական շրջանում Ճեմարանիս մէջ որդեգրներ պահելու յանձն առած են հետևեալ բարեպաշտօն ազգայինք

1. Պ. Առաքել Ծատուրեանն իւր անունով երկու որդեգիր, որոնք են՝ Կարապետեան Ստեփան Խաչմասեցի և Դանիէլեան Արգար Դիլիջանցի.

2. Տիկին Աննա Աթամալեան իւր ամուսնոյն Միրզա Աթամալեանի յիշատակի համար մի որդեգիր, որ է Գեղամեան Վարդգէս Բագուեցի.

3. Տիկին Շողակաթ Մելիքեան իւր անունով մի որդեգիր, որ է Վէքիլեան Անդրէաս Բագուեցի.

4. Պ. Նիկողայոս Իզմիրեանի անունով մի որդեգիր, որ է Մխիթարեան Խաչատուր Ղզլարցի.

5. Պ. Իսահակ Ժամհարեան իւր անունով մի որդեգիր, որ է Իշխանեան Բախշի-Գրիգոր Խանձքեցի.

և 6. Բագուի Մարդասիրական ընկերութիւնը պահում է մի որդեգիր, որ է Եղիա Տէր Յովհաննիսեան Բագուեցի:

Բացի այս Ճեմարանիս Մանկավարժական Խորհուրդը զանազան կտակութիւնների հիման վերայ ընտրեց հետեւեալ որդեգրներին.

ա. Բարեկիշատակ բժիշկ Գէորգ Տիգրանեանի անունով երեք որդեգիր, որոնք են Խալըխեան Յակովբ Մեծ Սալացի, Քիւրդեան Նիկողայոս՝ Աքքիրմանցի և Փսերեան Եղիազար Չալթրցի:

բ. Բարեկիշատակ Թումայեան ամուսնոց անունով մի որդեգիր, որ է Սարգսեան Գեղամ Շուշեցի:

գ. Բարեկիշատակ Գէորգ Լալայեանի անունով մի որդեգիր, որ է Մուրադեան Սահակ Մագրասեցի:

և դ. Բարեկիշատակ Մինաս Մելիքեանցի անունով, ըստ անօրինութեան նորա Բարեպաշտուհի այրւոյ, Տիկին Շողակաթ Աղաջանեան Մելիքեանցի Բագուեցւոյ՝ մի որդեգիր, որ է Տէր Գէորգեան Սուլթան Շիկահողցի:

Նմանապէս ընտրութեամբ Մանկավարժական Խորհրդոյ և ծայրագոյն բարեհաճութեամբ Վեհափառ Ս. Հայրապետի ուղարկուած են բարձրագոյն ուսմանց մէջ կատարելագործուելու՝ ա. Ճեմարանիս ընթացաւարտ սան Շնորհ. Մուշեղ սարկաւագ Տէր Գաբրիէլեանն ուղարկուած է Կիեվի ս. Վլադիմիր համալսարանն իբրև որդեգիր բարեկիշատակ Գէորգ Փրիդոնեանցի.

բ. Ճեմարանիս ընթացաւարտ սաներից Շնորհ. սարկաւագունք Սմբատ Տէր Աւետիսեան և Պօղոս Զուբարեան ուղարկուած են նոյն համալսարանն իբրև որդեգիր Բարեկիշատակ Գրիգոր Թումայեանի.

գ. Ճեմարանիս ընթացաւարտ սան Բաբեշնորհ Մամբրէ վարդապետ ուղարկուած է նոյն համալսարանն իբրև որդեգիր բարեկիշատակ Յովակիմ Ադամեանի:

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Խառն Ժողովը գումարուեցաւ 5 փետր. Գալաթիոյ խորհրդարանը նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տատեան Յարութիւն փաշայի:

1. Ժողովը նկատողութեան առաւ Իզմիրի գաւառային ընդ. ժողովին տեղեկագիրը, որով Տ. Մելքիսեդեկ Սրբազանի նոյն վիճակին Առաջնորդ ընտրուած ըլլալը ծանուցուած էր, և կատարուած ընտրութիւնը օրինաւոր գտնելով, հաստատեց զայն և որոշեց կատարել հարկ եղած պաշտօնական գործողութիւնները:

2. Տ. Ներսէս եպիսկ. Եսայեան Վանայ մէջ իրեն յանձնուած պաշտօնին նկատմամբ կարգ մը դիտողութիւններ ներկայացնելով, հրաժարական տուած էր. Ժողովը նկատողութեան առաւ այն դիտողութիւնները և չընդունելով անոր հրաժարականը, Ս. Նախագահին յանձնեց ի գործ դնել պէտք եղածը, որպէս զի առաջն. տեղապահը օր առաջ մեկնի իւր պաշտօնատեղին:

3. Էնկիւրիի առաջն. տեղապահ Տ. Տաճատ Վ. Ոսկանեան և գաւառային վարչութիւնը, տեղւոյն վիճակային գործերուն նկատմամբ զանազան գրութիւններ ուղղած էին Պատրիարքարան. Ժողովը այդ գրութիւններուն պարունակութեանը տեղեկանալէ ետքը, հարկ գտաւ Տ. Տաճատ վարդապետէն մանրամասն տեղեկութիւններ ստանալ նոյն խնդիրներուն նկատմամբ և որոշեց Պոլիս հրաւիրել զայն՝ անձամբ յայտնելու համար իր տեղեկութիւնները.

4. Քղիի գաւառային վարչութեան առաջարկութեան վրայ, Ժողովը անջատեց նոյն վիճակին հովուութիւնը Էրզրումի առաջնորդութենէն.